

թեմական տեսակէն էլ այնքան հեռաւորութիւնից չէ կարող նկատուի. մեր հողաբարձուաց ժամանակն էլ լրացած լինելով շատ անսիրտ են շարժուում: Անցեալ ամի նոյեմբեր ամսում մեր յաջորդի հրաւիրելով հաւաքվեցին նրա մօտ 12 հոգի, իրանց վրա առնելով «հասարակութիւն» տնտեսողը և գլխաւորապէս ընտրեցին իրենց միջից հողաբարձուներ: Ասում են թերթը առաջարկված է ի հաստատութիւն նորին վեհափառութեան. մինչև այժմ սպասում ենք, ոչինչ լուր չը կայ: Մենք լաւ համոզուած ենք, որ այդ ընտրութիւնը, իբրև անկանօն, չէ հաստատուելու, բայց մեր դպրոցների օգուտը պահանջում է եթէ չէ հաստատուելու, գոնէ թերթը վերադարձնւի նոր ընտրութիւն անելու համար:

Քաղաքի սուրբ Յովնանէս մայր եկեղեցու երեցփոխանի երեքամիսյա ծառայութեան ժամանակը լրանալու վրա է. յարգելի պարոնը իսկապէս տեղեակ լինելով կարգապահութեան կանոններին, բացի մեր քաղաքի յաջորդ վարդապետի եկեղեցում ծանուցումով, ինքը նա առանձին տպագրված ծանուցադրով հրաւիրում է նոյն եկեղեցու ժողովրդականաց ամսոյ 8-ին տեղւոյ տղայաց դպրոցը ինչպէս նոր երեցփոխան ընտրելու, նոյնպէս իր 1880 թվականի եկեղեցական հաշիւը գնելու համար: Մենք ի սրտէ համակրում ենք և կարող ենք գովել պարեգիտանի բռնած ընթացքը, բայց մի և նոյն ժամանակը չենք կարող չը նկատել որ կարգը պահանջում է, որ նա—երեցփոխանը իր երեք ամեայ հաշիւները տայ և ոչ միայն 1880 թվականի, տարաբաղադար այդ օրը նոր երեցփոխանի ընտրութիւնը յետաձգվեց մինչև հաշիւները վերադնենք. միթէ լաւ չէր լինի, որ ընտրել էին նոր երեցփոխան և նա ինքը հաշիւ տեսներին հետ նստելով ծանօթանար եկեղեցու հաշուի մօտ և ծախուց հետ:

Նոյն տեղից մեզ գրում են: Քաղաքի յաջորդ վարդապետը որ բարեկենդաններին գնացել էր իր հայրենիքը՝ Շուշի, պատի երկրորդ շաբթիւն, հակառակ ժողովրդի ակնկալութեանը վերադառնալով իր սքանչելի քարոզներով մեծ խթանում է մեզ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են: «Արժանահաւատ աղբիւրներից լսում ենք, որ Մ. Եպիսկոպոս Սմբատանց շուտով հրատարակելու է Ս.

տում էին և մասամբ թողնում գերեզմանի վրա: Այդ ցեղերի հասկացողութեանը և հաւատին հանձնատ, բացի ցեղակիցներից ուրիշ օտարական չէր կարող ներկայ գտնվել ինչպէս տօնախմբութեանը, այնպէս և մեծերից կատարելու ժամանակը. մինչև անգամ եթէ մի օտարական տեսնէր այս ցեղական սրբազորութիւնը, դա կը համարվէր սրբազորութիւն (տես: «La Cité Antique» Justel de Coulangé-ի, Liv. I. chap. I—IV, երես 7—38.) Ուստի ընկալում է, որ ցեղական խնդիրներին մասնակցում էին միայն ընտանիքի կամ ցեղի անդամները և ուրեմն «հոգւոյ հացը» ուտում էին սրանք և ոչ օտարականը: Այս սովորութիւնը ունէին հին հնդկացիք, հուսիցիները, յայնրը և գերմանացիք:

Եթէ ընդունենք թէ հայերը հնդկա-եւրոպական ազգերի թուին են պատկանում, եթէ ընդունենք այն ճշմարիտ միտքը, թէ բոլոր ցեղակից ազգերի սովորութիւնները ըստ մեծի մասին մի և նոյնն են, պարտ ենք թոյլ տալ որ մեր նախնիքը նա ունէին այս սովորութիւնները, երբ դեռ ընտանեկան կեանքով էին ապրում: Նա մանաւանդ որ նախնեաց «հոգեպաշտութիւնը» մեծելոցները և գերեզմանատանը կերակուր բաժանելը որքան մեզ է յայտնի, մինչև այսօր էլ դեռ չեն կորցրել իրենց նշանակութիւնը: Քրիստոնէութիւնը տուել է մեծ լուսնոյն միմիայն իրէականական տեսք: Այս հիման վրա կարծեմ մենք չենք սխալվի, ասելով թէ իշխելու առաժը չարաբոված է հին կուսակցութեան ժամանակից: Այն առաջնորդի ու ասածների նշանակութիւնը: Մեր երգարանները կաղնիները չեն զանազանում իրարից ոչ թէ առաջնորդ ասածներից, այլ շատ անգամ նրանց տեղ գործ են ածում հասարակ նախադասութիւններ և մտքեր: Վեր առէք օրինակի հա-

Յիւրիգոր Ղուսաստանի ազգաբնակիչները, դանազան պատմական փաստերով հաստատելով, որ մեծ սրբի սերնդից այժմ ևս կան ներկայացուցիչներ, որոնց միջին է մի բարձրատեսիլ հոգեւորական էջովածնի միաբանութեան մէջ: Նոյնպէս լսում ենք, որ սրբազանը դիմել է նորին վեհափառութեանը խնդրելով, յանձնել իրան Ներկայից թեմայի առաջնորդութիւնը և ներկայացրել է իր ապագայ գործունէութեան և այն բարեկարգութիւնների նախագիծը, որ ի նկատի ունի իրագործել: Այդ պաշտօնը նա յանձն կառնի միայն այն պայմանով, որ ուժիկը աւելացնեն:

ԳՈՒՇԷԹԻՑ մեզ գրում են: «Մեր երկու քահանաները իրանց շատ անվայել կերպով են պահում: Այս օրերս նրանք միմեանց մէջ կուեցին «միմեանց ծնեցիկ»:

ՌԵՍԱ լրագիրները որպէս լուր հաղորդում են, որ թագաւորապաշտ Ռիսակովի հայրը անձնապաշտութիւն է գործել:

Այս օրերս պ. Բահաթրեան, «Тифл. Объявления» լրագրի նախկին խմբագիրը հրատարակեց մի բրոշուր մեր փոխարքայի կրօնախոսութեան հետեւալ վերնագրով «Наше общество взаимного кредита». Այդ բրոշուրի մէջ հեղինակը այն միտքն է յայտնում որ մեր այդ հիմնարկութիւնը մի խոշոր պակասութիւն ունէր իր ամբողջ գոյութեան ընթացքի ժամանակ, այն է որ նա չուներ իր անդամների մէջ երկու տարբեր տեսակները և հաստատարակել կերպով չէր ծառայում նրանց շահերին: Անդամներից ումանք ընտրելու և լինելու էին, որոնք վայելում էին ամենամեծ և ամենաշահեկան կրօնախոսները, միջին և փոքր կարողութեան տէր մարդիկ վայելում էին աննշան կրօնախոս: Հեղինակը առաջարկում է որպէս միջոց ժողովրդի մէջ հաւատարմութիւն ծնեցնելու դէպի Ռիսակովի փոխարքայի կրօնախոսութիւնը, միշտ հրապարակապէս յայտնել ինչքան կրօնախոս ունի ընկերութեան ամեն մի անդամ: Հեղինակը ապացուցանում է իր այդ առաջարկութեան օգտաւէտութիւնը:

Պ. Գրիգոր Դանդուղեանցից թարգմանած գրքույկը «Մտաւոր, ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին» շատ օգտաւէտ և հեռաւոր տարբեր գրքույկ է: Դա բաժանվում է երեք մասի վրա, մասաւոր ինքնակրթութիւն, ֆիզիկական ինքնակրթութիւն և բարոյական ինքնակրթութիւնը: Գրքը որ անգլիացի Ջոն Սոխարտ

մար «Սոխակ Հայաստանին» և դուք կը տեսնէք առաջնորդի շարքում հետեւեալ հասարակ մտքերը: 1, «Աստուծո լուրը հասնի. 2, Բերան չէ տաճար է. 3, Լուրը լուսաւորի. 4, Հողը խաբար չը տանի»: Միթէ սրանք առած կամ ասածք են: Ինչպէս երևում է պ. Պ. Գրիգորեանցը բոլորովին հասկացողութիւն չունի առաջնորդի և ասածների մասին:

Մենք վերջացրինք մեր նկատողութիւնը ժողովրդական գրականութեան երկու տարբեր մասին, — բանաստեղծութեան և առաջնորդի: Մենք ակնարկեցինք մի քանի երգեր և առաջնորդի, որոց մայրով նրանց նշանակութիւնը համեմատական ազգագրութեան (сравнительная этнология) կէտից: Պարզ է այժմ ինչ նշանակութիւն ունի մի որ և իցե ազգի ժողովրդական գրականութեան կատարելապէս ուսումնասիրելը և հետազոտելը:

IV. Մի քանի և բ զ է ը ի զ ա ս ա կ ա ը գ ու թ ի շ ը:

Դասակարգելով կրկին մեր ժողովրդական բանաստեղծութեանը, մենք բերում ենք այստեղ մի քանի երգեր. Նախ կախատենք նրանց դասակարգել (классифицировать), երկրորդ մեր ուշադրութիւնը կը դարձնենք նրանց գրականութեանը ազգագրութեան կէտից, կը բացատրենք նրանց ծիսական նշանակութիւնը:

ա) Պ ա տ մ ա կ ա ը և բ զ է ը:

1, Վարդանայ պատերազմը:

Սվարդան (*) խեղձած (հեղինակը) կարմիր ջորին (ջորի):

Գնաց խապաւ (հասաւ) Մասիս սարին:

Ջրմէն (բոլոր) զօշուն (զօք) գլխին ժողկնց (ժողովկնց):

*) Սվարդան=սուրբ—վարդան:

Բլէկկիի հեղինակութիւնն է, պարունակում է իր մէջ շատ օրտաւէտ կենսական խորհրդներ: Ամեն մի հային խորհուրդ ենք տալիս առնել և կարդալ պ. Դանդուղեանցի թարգմանութիւնը, մանաւանդ որ նա գրված է հակառակ, թեթեւ, դուր եկան լեզուով և շատ հեշտութեամբ, արագութեամբ և վերին աստիճանի հետաքրքրութեամբ է կարգացվում: Գլխը 60 կօպէկ է: Շատ ուրախալի է որ մեր երիտասարդները սկսում են այժմ աշող ընտրութիւններ անել իրանց թարգմանութիւնների համար:

ՋԱՔԱԹԱԼԻՑ մեզ գրում են: «Այստեղի հայերը օրիորդական դպրոց չունեն, ըստ որում իրանց աղջիկներին օտար լեզուով են դաստիարակում, քանի որ աղջիկները դեռ իրանց մայրենի լեզու չը գիտեն: Դրա հետեւանք այն է որ իրանց մայրենի լեզու չը գիտող աղջիկները, օտար լեզուն էլ շատ վատ են սովորում և անկարող են նրան իրապատել: Այդպիսով նրանք ոչ հայ են և ոչ օտարազգի»:

Ջաքաթալից մեզ հաղորդում են հետեւեալ գրքերը առաջին հարկաւորութեան միջերջերի: Մի ամիս առաջ ցորենի պուզը 2 թ. 24 կ. էր, բրինձ 3 թ. 20 կ., խիլ այժմ ցորենի պուզը արժէ 1 թ. 20 կ., բրինձը 2 թ. 10 կ., պարին 70 կօպ., կորեկը 50 կօպ.: Տեղիս առեւտրական դասը մեծ վնաս է աւում: Այս տարի, ինչպէս երբեք, մեծ առատութիւն կը լինի Ջաքաթալի կողմերում:

ԿԻԷՎՈՒՄ հրէաները առուուոր են անում սուրբ պատերիներով, խաչներով և այլն: ԿԻԷՎ քաղաքային վարչութիւնը հարց է դարձնեցրել, թէ կարող են արդեօք հրէաները առուուոր անել խաչներով և սրբերի պատերներով, որոնք կաղնուած են քրիստոնեաների երկրպագութեան առարկաներ, և արդեօք այդ մասին չը կայ առանձին արգելաւթի հոգեւոր վարչութեան կողմից, քանի որ այդ տեսակ առուուորի մասին ոչինչ չէ ասված առեւտրական օրէնքներում: Հոգեւոր վարչութիւնը անհրաժեշտ համարեց միջնորդել, որպէս զի արգելի հրէաներին առուուոր անել սրբերի պատերներով և խաչներով, մանաւանդ ԿԻԷՎում, որտեղ լցվում են ուղղափառ ուստարները Ռուսաստանի ամեն կողմերից: Ինչպէս լսվում է այս մասին հրէաների իրաւունքները օրէնսդրական կարգով սահմանափակելու հարցը առաջարկված է մինիստրութեան եղբակցութեանը:

Մասաւ ոտքին իրեք (երեք) օր կուլեց (պատերազմեց):

Լանգ-թէմուրի զօշուն ջարդեց (կոտորեց):

Սվարդան խեղձած կարմիր ջորին,

Աչքը թալեց (նայեց) սև ամբերուն (ամպ):

Գլխուն վերեւ միշտ երկնից,

Մէջ ամբերուն Աստուածածնու գօտիկ (*)

(գօտի):

Աստուծո խրիշտակ (հրեշտակ) երկնքն իջաւ,

Սվարդանին ձէն տուաւ (գրեց):

Վարդան, Վարդան խեղիք (հերիք) կուլես,

«Նօրինի արուն (արեւն) թափես»:

Սվարդան գիր թուր (սուր) ի բուն գրեց,

Դուրը (գլուխ) կախուց, մէջը ծոցը:

Լանգ-թէմուրը վր թուր քաշեց,

Սվարդանայ գլուխ կուց (կորեց):

Սվարդան գէտնէն (գետին) գլուխ վերուց (վեր առնել):

Խեղձաւ ջորին ու շուտ փախուց,

Գնաց, խապաւ Մակուա սարին,

Գլուխ պահեց (պահել, թաղցնել) մըջ մուկէրուն (ալ):

Այս թանգազին երգի մէջ նկարագրած է վարդանայ պատերազմը, երգի հեղինակը չեղովում է պատմութիւնից, որովհետեւ վարդան, ինչպէս յայտնի է պատմութիւնից, պատերազմեց պարսից զէմ և ոչ թէ Լանգ-թէմուրի (Тамерлан), որը աւերեց Հայաստան միայն XIV դարում:

Երգի բովանդակութիւնը համար համապատասխան է ժողովրդի աւանդութեան: Վարդանը ժողովրդի իր բոլոր զօրքը, գնում է Մասիս լեռան ստորոտը Լանգ-թէմուրի զէմ պատերազմելու: Երեք օրեայ պատերազմից յետոյ վարդանը կոտորում է Լանգ-թէմուրի զօրքը: Բայց յանկարծ երկնից

*) Սվարդան=սուրբ—վարդան:

**) Աստուածածնու գօտի=աղիգ:

Այսօր, մարտի 21-ին, չարաթ օր, պ. Պաշինոկը կարգայ թիֆլիսի կրօնական իր դասախոսութիւնը Հնդկաստանի մասին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

Լրագիրները. հաղորդում են հետեւեալ տեղեկութիւնները:

Նօրերում Հոսթի մէջ մի ժողով կայացաւ, որին մասնակցեցին Խաղաղի բոլոր ընկերութիւնների և միութիւնների ներկայացուցիչները և որ կազմվեցաւ միեւնոսութեանը յիշեցնելու համար, թէ քնտրողական ձեւը Խաղաղի մէջ արմատական փոփոխութիւնների պէտք ունի: Այդ ժողովի խորհուրդները և վճիռները չափազանց արմատական բնաւորութիւն ունեն:

Ժողովը չը բաւականացաւ նրանով, որ բոլոր աղամարդիկ քուէարկութեան իրաւունք ունենան, այլ այդ բանը պահանջեց նոյնպէս և կանանց համար: Դա հանգամանքները կշռող և ապագան նախատեսող քաղաքագէտների ժողով չէր, այլ Խաղաղի այժմեան զրուծներից անբաւական մարդկերանց ժողով, որ հարկաւոր համարեց յայտնել իր բոլորքը կառավարութեան դէմ:

Ընտրողական հարցի վերաբերութեամբ այժմ Խաղաղի այն գրութեան մէջ է, ինչ զրուծեան մէջ եղել են միւս պետութիւնները, կրք զանազան հանգամանքների շնորհով հասարակութեան պահանջները կրկար ժամանակ բաւականութիւն չը ստատուեալով, արտայայտվի են օտարոտի և անկարգ ձեւով: Պարլամենտական աշխատանքները ընտրողական հարցի վերաբերութեամբ շատ ինքնուրոյն կերպով են կատարվում և մեծ մասամբ անկատար են մնում: Ընտրողական հարցը իտալական պարլամենտի մէջ շատ անգամ բարձրացրած է թէ կառավարութեան և թէ պատգամաւորների կողմից: Շատ անգամ ներկայացրած են պարլամենտին ընտրողական ձեւի վերանորոգութեան նախագիծներ, որոնք յանձնվել են մասնա-

քը ամպում է և աղիղի (Աստուածածնայ գօտին) կամարը կապվում է երկնքում: Հրեշտակը երևելով վարդանին, հրամայում է արեւահեղութիւնը վերջացնել: Քաջ հնազանդվելով Աստուծոյ կամքին, սուր տեղը գնելով կեռում է իր շինքը և Լանգ-թէմուրը նրան սպանում է: Սպանվելուց յետոյ վարդանը, վեր է առնում իր գլուխը, հեծնում է ջորին և փախում Մակու գաւառը: Մակուայ ձորի մէջ ջորին նեղանում է և էլ չէ կարողանում վազել: Վարդանը իջնելով ջորեց նստում է ջորուն ասելով՝ Վեդ քո ծնունդը չորանայ: Այս օրից ջորին կորչում է իր ծննդական ընդհանրութիւնը: Մեր ռաբինի ժողովրդի կարծեքով վարդանի անէծքն է պատճառը, որ ջորին չէ կարող ծնել: Սրանից յետոյ վարդանը պատահում է մի մեծ քարի, որը նրա ճանապարհը կտրում է, սուրբ դուրս քաշելով, վարդանը զարկում է և քարափը բաժանվում է երկու մաս, ճանապարհը բացվում է նրա առաջ: Վերջապէս վարդանը հանում է մի մուկէր այրի, որտեղ և թաղցնում է իրեն նահատակած գլուխը: Մի ուրիշ աւանդութեան համեմատ վարդանը պատերազմում է պարսից զէմ կրկին Մասիս լեռան մօտ և ոչ Տղմուտ գետի ափում, Աւարայր դաշտում: Մեր ռաբինի ժողովրդի շատ մասը մինչև այսօր էլ Մասիս ոտքը անուանում է «Աւարայր» դաշտ:

Այս երգը մենք առաջին անգամը լսեցինք աշուղ Սարգսից: Նա ինքը Նոր-Բայազետի գաւառիցն էր և, եթէ չենք սխալվում, Գղմաշէն գիւղից: Աշուղ Սարգսից յետոյ մենք շատ աշուղների խորհրդները երգել վարդանայ երգը, բայց խզուր, որովհետեւ ոչ ոք նրանցից, բացի ընդհանուր աւանդութիւնից վարդանայ մասին, այս երգը չէր գիտում: Մենք շատ աշխատեցինք բացատրել թէ այս երգը ընդհանուր ժողովրդ-

ժողովները քննութեանը, բայց նրանք մոռացութեան են ենթարկուել, որովհետեւ պարլամենտի արտօնութիւն ունեցող փոքրամասնութիւնը չէ կամեցել զրկուի իր առաւելութիւններէն և որովհետեւ անկարելի է եղել այդ հարցի մասին որ և է համաձայնութիւն կայացնել:

Իտալական կառավարութիւնը անցեալ ամառ ներկայացրեց պարլամենտին մի նախագիծ ընտրողների իրաւունքը ընդարձակելու մասին, որ մինչեւ այժմ ընդունուած չէ պարլամենտից: Թէպէտ կառավարութիւնը և այդ նախագիծը քննող մանածողովքը անհրաժեշտ են համարում առաջարկած վերանորոգութիւնը, բայց պատգամաւորները և մինիստրութիւնը չեն կարողանում համաձայնութիւն կայացնել, թէ ի՞նչ ուղղութեամբ և ի՞նչ չափով պէտք է մեծացնել ընտրողական իրաւունքները: Իտալական կառավարութիւնը չէ կամենում հետեւի ֆրանսիայի և Գերմանիայի օրինակին, որտեղ ընտրողական իրաւունքը պայմանաւորված է քաղաքական չափահասութեամբ: Այս պահանջին նա աւելացնում է տարրական կրթութեան պահանջը, բայց իտալիան եւրոպական այն պետութիւններից է, որոնց մէջ գրագիտութիւնը շատ քիչ է տարածված: Պարտադիր ուսումը նորերում է դարձել պետական օրէնք և կրթական ցենզով պայմանաւորված ընտրողական վերանորոգութիւնը անպատեղ կը մնայ իտալական ժողովուրդի համար, որ քաղաքականացած է հասարակական բարքերի և դարեւոր կուլտուրայի շնորհով, բայց որ միջոց չէ ունեցել անցնել տարրական ուսումնաւարման:

Այն ժամանակից, որ իտալիան անկախ և միացած է, նրա քաղաքական կեանքի մէջ միշտ նկատուել է պարլամենտի անհաւատարմութիւնը և անտարբերութիւնը դէպի ժողովրդի մեծամասնութիւնը: Այդպէս է տրամադրված մինչև անգամ այժմեան առաջին մինիստր Կայրոլի և կառավարութեան մի քանի միւս անդամները: Միայն վերջին ժամանակներում պարլամենտի մի

քանի անդամները թողին իրանց անտարբերութիւնը դէպի ժողովուրդը և ընտրողական ձևի վերանորոգութեան պատճառով միացան ծերունի Գալիբալդիի հետ, որ առկա մեծ ժողովրդականութիւն ունի ամբողջ իտալիայի մէջ: Սրանցից մի քանիսը ընդհանուր քուէարկութիւնը անհրաժեշտ բարօրութիւն են համարում, միւսները անհրաժեշտ չարիք, բայց երկու կողմերն էլ հասկանում են, թէ անկարելի է պահել այժմեան դրութիւնը, որ անհամապատասխան է ժողովուրդի խելքին և զարգացմանը և որ քաղաքական կեանքը անպատեղ է դարձնում ժողովրդի համար:

Ձրնայելով երկրի այս դրութեանը մինիստրութիւնը և պարլամենտը ուշացնում են այն վերանորոգութիւնը, որ ընդունալ է ցոյց տալ ժողովրդի ձգտումները: Այժմեան պարլամենտի և միւս հիմնարկութիւնների բարոյական հեղինակութիւնը հեղհեղեղ է ոչնչանում է և դուրս շուտով երևան կը գայ պարլամենտից բաժանված ժողովրդական ոյժը և այն ժամանակ ուշ կը լինի ելք գտնել դժուար դրութենից: Այս միտքը շատ անգամ արտայայտուել է իտալիայի մէջ, բայց նա դրական հետեւանքներ չէ ունեցել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Նկցցայից հեռագրում են, որ մարտի 12 (24) այդ քաղաքի օպերայի թատրոնի մէջ յայտնվեցաւ հրդեհ լույսի տակ: Օպերայի ներկայացման սկզբին: Թատրոնը լի էր: Ոչնչով չէ կարողացան կրակը հանգցնել և շատ հանդիսականներ զոհ գնացին հրդեհին:

—Լոնդոնի «Times» լրագրին Կ. Պոստից հեռագրում են մարտի 16-ից հետեւելը. «Ռուսաց Կայսրի տրագիքական մահը խոր տագնապով էր զգոյց սուլվում: Մուլթանը, ինչպէս յայտնի է, անդադար երկիւղի մէջ է դառնում, և երևակայում է զանազան դաւադրութիւններ և սպանութիւն իր դէմ, իսկ հասարակութիւնը, ի հարկէ, զանազան կարծիքներ է յայտնում այն աղեղնութեան մասին, որ կուսենայ Պետերբուրգի անցքը թիւրք կառավարութեան վրա յունական հարցի մէջ: Մի քանիսն են կարծում են, որ այժմ սուլվանք կը հա-

մանայի նշանաւոր զինուորներ անել, պատերազմի առաջն առնելու համար: Միւս կողմից կարծիքներ են յայտնվում, որ նորին մեծութիւնը վախենում է զլիսաւորապէս իր հպատակների ֆանատիկոս մասից, և այժմ առաջվանից աւելի կընդդիմադրի մահմետականներով ընդհանրած մէկ երկիր յանձնել Եւրասիական: Ինչ որ խօսվում է հասարակութեան մէջ դեպի պանթիքի խորհրդակցութիւնների մասին թիւրքաց հաւատարմութեան հետ, դեռ ևս ոչինչ դրական հետեւնք չէ կարելի դուրս բերել: Ռովհետեւ բանակցութիւնները շատ դանդաղ են ընթանում և երկու կողմերն ևս պաշտպանում են իրանց սկզբնական պահանջները: Թիւրքաց պատգամաւորները խաղաղ արամադրութիւն են յայտնում և մի քանի զինուորներ են անում Թեսալիայում: Բայց շատ քիչ յոյս կայ, որ և էպիրոսում որ և է զինուորն անվի: Գեոպոլիսները, ասում են, դիտաւորութիւն ունենին վարձատրութիւն գտնել կրիտ կղզում, կամ Արչիպելագոսի մի քանի ուրիշ կղզիներում, բայց մինչև այսօր այդ միտքը պաշտօնապէս չէ յայտնված: Երկու կողմերն ևս խիստ զգոյշապահութիւն են անում այն բանի մասին ինչ որ կատարված է և ինչ պէտք է կատարվի: Բայց դժուար է նկատել, որ դեպքանքներն ունեցած յոյսը բանակցութիւնների վերջնական աջդրութեան մասին ներկայումս փոքրացած է:

—Փարիզից լրագրներին հեռագրում են մարտի 9-ից հետեւելը. Գամբետայի նախագահութեամբ Տրոյսկիոսում կայացաւ Առնաւորական զանապետութեան խորհուրդը, որ հաւաքվեցան ութ հազար մարդիկ: Գամբետայի հորհրդակցութիւն յայտնեց իրան պատուով ընդունելու համար, ոչ որպէս անձնաւորութեան, այլ որպէս Ֆրանսիայի գործի ծառայողին: Վախճանում, որպէս և ամենքի կենսաբան լինում են նեղութիւններ և անխորհրդութիւններ, բայց ևս մի ալ բաւականութիւն չեմ որոնում, քանի քաղաքացիների կրթնագիտութիւնից: Ես անտարբեր եմ դէպի անձնական հարցերը, որոնց հետ միանալը անտարբեր եմ համարում: Ես առաջը դեռ ժամանակ ունեմ, իսկ զլիսաւորն է հաստատուն եռանդ և անդրդուելի կամք: Ես չեմ վերաւորվում, կը խօսում են իմ ատելութեան մասին դէպի ամեն տեսակ ցնորքներ: Աշխատանքը և կապիտալը, ասա այն երկու ուժերը, որոնք պէտք է ոչ թէ կուսեն, այլ օգնեն Ֆրանսիայի մեծութեան և հարստութեան զարգացումը: Ուղիղ են ասում, որ հանրապետութիւնը ամեն կառավարութիւնից բարձր է, որ հանրապետութեամբ և հանրապետութեան

հետ կարելի է վճռել դժուար խնդիրներ՝ չը խաբվել և չը խաբել ուրիշներին: —«France» լրագրում Գերարդէն այն միտքն է յայտնում, որ Ալեքսանդր III-ի զանաքաւոր յետոյ պէտք է մեծ փոփոխութիւն պատահի եւրոպական գործերի դրութեան մէջ, որ զիպլոմատների քաղաքականութիւնը տասնամյակների քաղաքականութեան տեղը կը բռնի և որ ինչ. Ռուսիայի, թէպէտ առաջվայ պէս կրկին կը չըրկացնի իր սուրը, բայց այլ ևս անպատեղ չէ կարող հանել նրան պատեանից: Երբ պուրկիցիստը խորհուրդ է տալիս ամեն կերպով բարեկամական յարաբերութիւններ կապել իտալիայի հետ և յայտնում է այն կարծիքը, թէ Ռուսաստանը Գերմանիայի այլ ևս այնպիսի հաւատարմութեամբ զաշնակից չէ լինի, ինչպէս որ էր մինչև այժմ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 մարտի: Բաղաւոր կայսրը, վճռելով վերջ դնել չարագործներին յանցաւոր գործունէութեան զարգացմանը և պաշտպանել մայրաքաղաքը չարագործութիւններից, հրամայեց օգնութեան հրաւիրել մայրաքաղաքի ամբողջ ազգաբնակչութիւնը ընտրվածներին, որոնցից քաղաքացիների մօտ կազմել ժամանակաւոր խորհուրդ քաղաքացիների մասնակցութեամբ: Խորհուրդի մեծամասնութեան հաւանութիւնը ստացած իւրաքանչիւր միջոց անշաղկապ իրագործվում է քաղաքացիներից: Մայրաքաղաքի 228 բաժիններից իւրաքանչեւը պէտք է մի մարդ ընտրէ: Սրանք իրանց միջից կընտրեն խորհուրդի 25 անդամներ և 25 կանդիդատներ, որոնց ցուցակը կը ներկայացնուի Փազաւորին: Այսօր ընտրութիւնների սկիզբն է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 մարտի: Պետական բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ռ., երկրորդ 93 ռ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ. 12 կ., ներքին 50% տոմսը փոխառութեան տոմսակը արժէ 224 ռ. 50 կ., երկրորդ 217 ռ. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ռ. 37 կ., երկրորդ 92 ռ. 37 կ., երրորդ 92 ռ. 37 կ., օսկի 7 ռ. 93 կ.: Ռուսաց 1 ռուբլ լոնդոնի վրա արժէ 24,75 պենս, Բերլինի վրա 125 պենս, ռուսաց 100 ռ. Փարիզի վրա արժէ 226 մարկ: Բօրայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

դական է, թէ չէ աշուղ Սարգսի շարագործիւն և մինչև այսօր այս հարցը չը պարզվեց մեզ համար: Ում որ չը լինի այս երբը, այսուամենայնիւ մենք հրատարակում ենք: Գուցէ վերջը բացատրվի այս հարցը:

2. Ս Ո Ւ Ր Ը Կ Ա Ր Մ Ա Կ Ե Ս Ի Դ Ա Մ Ա Մ Ո Ւ Մ Ա Ն Ը:

Սուրբ կարապետ *) կայնաւ (կանոնեց) դիւան, Դեմիր (դե) ժողովեց դրեց զնգան: Կախ-Կեմի սաւա շեման, եման, Էն կընեմ քեզ փոշախան (փոշահան), Կը տանեմ թափեմ փրքաթման:

ՍՆԱ երգի բովանդակութիւնը: Սուրբ կարապետ ժողովում է բոլոր դեկորն և դնում գրնդանը-բանտը: Կաղ-դը (երեկ նրանց զլիսաւորը) աղատութիւն է խնդրում սրբից այն պայմանաւ, որ լինի փոշահան, —սուրբ կարապետի վանքի թողիւնները—վառարանները—փոշին տանի թափի փրքաթման: (Կարծեմ փրքաթմանը մի գիւղ է եփրատ դետի ափում):

ՍՐԻՆԱՐԱՐԱՆ ԵՐԳԵՐ (Эротическія пѣсни) Հետեւեալ երգի մէջ երրորդը զնուկով իր սիրած օրիորդին խնդրում է դուրս գալ, որ նա կարողանայ դուրսնանալ, բերել իր սիրածի գեղեցկութիւնով:

Օրիորդը պատասխանելով երրորդին, համեմատում է իր գեղեցկութիւնը խնձորի, հաւառունի ծառի չափով: Հետ և ալ լինում է երրորդը: «Ա՛յ հայի աղջիկ, «Ա՛յ շահի աղջիկ, «Մէ (մի) դուս արե (արի) Գո բոյը (հասակ) տէսնեմ (տեսնեմ):

Օրիորդը «Ա՛յ հայի աղջիկ») Ա՛յ շահի աղայ «Բաղայ (պարտեղ) չեմ գնացի (գնացել) Ֆիդան (նորաստանի ծառ) չեմ տեսն (տեսնել):

Երկրորդ. Ա՛յ հայի աղջիկ, Ա՛յ շահի աղջիկ, Մէ դուս դուս արե, Գամբը (բոս) տէսնեմ:

Օր. Ա՛յ հայի աղայ, Ա՛յ շահի աղայ, Գարուն (կարաւան) չեմ գնացել, Չուան չեմ տեսն:

(Այստեղ օրիորդը իր մազերի երկարութիւնը համեմատում է չուանի երկարութեան հետ):

Երկրորդ. Ա՛յ հայի աղջիկ, Ա՛յ շահի աղջիկ, Մէ դուս արե, Ճակատդ տէսնեմ:

Օր. Ա՛յ հայի աղայ, Ա՛յ շահի աղայ, Շհար (քաղաք) չեմ գնացել, Մէ յոյն չեմ տեսն:

(Օրիորդի ճակատի լայնութիւնը համեմատում է հրապարակի լայնութեանը):

Երկրորդ. Ա՛յ հայի աղջիկ, Ա՛յ շահի աղջիկ, Մէ դուս դուս արե, Ընքներդ (յօնք) տէսնեմ:

Օր. Ա՛յ հայի աղայ, Ա՛յ շահի աղայ, Երկիրդ չեմ ըրիշկե (նայել) Կամար (աղեղն) չեմ տեսն:

«Ա՛յ հայի աղջիկ, Այ շահի աղջիկ») կամ Հայի աղայ, Այ շահի աղայ» երգակիցները (ПРИПѢВЪ) կրկնում են ամեն տան սկզբումը, ուստի աւելորդ եմ համարում մի և նոյնը կրկնել:

Երկրորդ. Մէ դուս դուս արե, Թչերդ տէսնեմ:

Օր. Բաղ (այգի) չեմ պահել (СТОРОЖИТЬ), Ալ (կարմիր) խնձոր չեմ տեսն:

Երկրորդ. Մէ դուս դուս արե, Աչքերդ տէսնեմ:

Օր. Ժամ (եկեղեցի) չեմ գնացել, Կանթեղ չեմ տեսն:

Երկրորդ. Մէ դուս դուս արե Պոստը տէսնեմ:

Օր. Նուա (նուռ) չեմ կէրե (ուտել) Մէջը չեմ տեսն:

Երկրորդ. Մէ դուս դուս արե Ատամներդ տէսնեմ:

Օր. Վճիռ (ожерелье) չեմ առել, Սարաֆ (перлаутры) չեմ տեսն:

Երկրորդ. Մէ դուս դուս արե Գո վիղը (շիւքը) տէսնեմ:

Օր. Կեօը (իմ) չեմ գնացել, Օրդակ (բաղ) չեմ տեսն:

Երկրորդ. Մէ դուս դուս արե, Բո զօշը (կուրծք) տէսնեմ:

Օր. Սարը (խառն) չեմ գնացել, Չուան չեմ տեսն:

(Այստեղ կուրծքի սպիտակութիւնը համեմատած է ձեան սպիտակութեանը):

Երկրորդ. Մէ դուս դուս արե, Ծրծերդ տէսնեմ:

Օր. Բոստան չեմ գնացել, Դամադ *) չեմ տեսն:

Երկրորդ. Մէ դուս դուս արե, Բո մէշկը (раба) տէսնեմ:

Օր. Վարդ չեմ քաղել, Գատտայ (букетъ) չեմ կապել:

Այս երգի մէջ օրիորդը նկատարում է իր գեղեցկութիւնը, համեմատելով իր մարմնի անդամները զանազան ժողովրդի կարծիքով գեղեցիկ աւարականի, —թուրք կարմիր խնձորի, առանհերք սաղափի, ծրծերը չափով և այլն:

Երգը լինի է չափազանցութիւններով (гипербол), օրինակի համար ճակատի լայնութիւնը համեմատած է մէջքանի հետ, յօնքերի կամարը—աղեղի և այլն:

(Այ շարունակվի) (*) Դամադ առանձին փոքրիկ անուշահոտ տնի է, չափով օրիորդ նշան է: Եթէ մի երրորդ սարգ սիրահարուած է մի օրիորդի վրա, նա զարգարում է մեխակով մի չափամ և ծածուկ ուղարկում օրիորդին: Եթէ այս վերջինը ընդունում է ուղարկած չափամը, այս նշանակում է, որ օրիորդը եւ սիրում է երրորդին, հակառակ դիպուածում մերժում է նրա ուղարկած չափամը:

*) Ռամիկ ժողովուրդը սուրբ կարապետին կոչում է Վրկարապետ:

*) Երբեմն ասում են Հայ հայի աղայ, Այ քրդի աղայ:

